ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 495 - Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 4 (չորս) քաղաքացու հատկացնել 100000 (մեկ հարյուր հազար) դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին հանձնարարել ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում կատարել գումարի վճարում՝ բանկին փոխանցելու միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

Ստորագրող
ՍԵՐԳԵՅ ՄՈՎՍԻՍՅԱՆ
3309890457

X

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. նոյեմբերի 18 ք.Աշտարակ